հոգևորականների ձեռնպահությունը: Այդ ընկերության բողոքական և ծայրահեղ վերափոխական ոգին արտայայտում է այն բանում, որ նրանք լրենց Աստուածաշնչից արտաքսում են ոչ կանոնական գրքերը, որոնք յարգուած են և Անգլիական եկեղեցու կողմից: Ահա այդ բանի համար էլ անկարելի համարուեց ներկայացնել ընկերության Աստուածաշունչը Էդուարդ VII-ի թագադրության ժամանակ՝ նրա եկեղեցական չը լինելու պատճառով: Ընկերության գործունէության այդ կողմը շարժում է ոչ միայն Անգլիական եկեղեցու անդամների, այլև բողոքականների դժգոհությունը: Սակայն ամենքն էլ ընդունում են այն մեծ ծառայությունը, որ արել է ընկերությունն հէնց Աստուածաշնչի թարգմանության գործում: Ամբողջ մի դար ընկերությունն աշխատել է այդ դժուարին գործի վրայ և հասել մեծամեծ հետևանքների:

Այդ ընկերության սկիզբն առնելու ժամանակ Աստուածաշունչը նոյն իսկ 50 լեզուով անգամ թարգմանուած չէր: Հարիւր տարուց յետոյ այդ ընկերության ջանքերով ամբողջ Աստուածաշունչը թարգմանուած է 97 լեզուների. նոյնքան լեզուներով թարգմանուած է Նոր-կտակարանը, վերջապէս մէկ կամ մի քանի գրքեր թարգմանուած են 180 լեզուների, այնպէս որ այժմ Սուրբ գիրքը մասնակի կամ ամբողջությամբ թարգմանուած է աւելի քան 370 լեզուների: Ընկերությունն իւր գոյության ընթացքում տարածել է ո. գիրքը 180 միլիոն օրինակից աւելի: Չընայած այս բոլորին՝ ընկերությունը դեռ մեծ գործ ունի անելու: Դեռ 450 միլիոն մարդիկ չունին լրենց լեզուով թարգմանած Աստուածաշունչը և դեռ 108 լեզուով կամ բարբառով թարգմանուած չէ նրա և ոչ մի գլուխը: Իւր գոյության երկրորդ դարում ընկերությունը մտադիր է մեծացնել իւր հիմնական դրամագլուխն և հասցնել այն 2½ միլիոն ռուբլու, որով և յոյս ունի լրացնելու վերոյիշեալ կարիքները:

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պօլսում որակ պայթիւնից վախճանուել է հայ կաթոլիկների «Պատրիարք և կաթուղիկոս տանն Կիլիկիոյ» Էմանուէլեան արքեպիսկոպոսը: Տարաբաղդաբար շատ քիչ բան գիտենք հայը Էմմանուէլեանի գործունէության մասին, բայց այն հան-

գամանքը, որ նրա օրօք տեղի չունեցան Ազարեանի պատրիարքութեան ժամանակուայ հայ ժողովրդին բաժան միութիւններ պատկերացնելու փորձերը և երբէք ընդհանուր հայութեան օգտին ընդդէմ ոչ մի կարգադրութիւն տեղի չունեցաւ և շըրջաբերական չըհրատարակուեց, հէնց միայն այդ երևոյթը բաւական է իբրև նրա անուրանալի բարեմասնութիւն ընդունելու: Բաժանելով հայ կաթոլիկ համայնքի վիշտը, կ՚աղօթենք Արարչին յաւիտենից, որ արժանաւոր հովիւ և պատրիարք յաջորդանի մեր հայ կաթոլիկ եղբայրներին:

—Ինչպէս հաղորդում են Presse Associée գործակալութեան, Վատիկանը իտալական բոլոր կղերական թերթերին գաղտնի շրջաբերական հրահանգ է ուղարկել բացարձակ լռութիւն պահպանելու այն բոլոր հանդէսների մասին, որոնք ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Լուբէի Իտալիա գալու ժամանակ տեղի կունենան: Նախագահն, ինչպէս յայտնի է, Իտալիա է գնում այնտեղի արքայական զոյգին փոխայցելութեան:

Գործակալութեան տեղեկութիւններին նայելով, իտալական կաթոլիկները նախագահի Իտալիա գտնուած ժամանակ մտադիր են հակացոյցեր անելու, որով ցանկանում են արտայայտել իրենց բողոքն ու դժգոհութիւնը ֆրանսիական կառավարութեան հակաեկեղեցական ուղղութեան համար:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(Մահուան հարիւրամեակի առթիւ):

Բացի մի քանի բնական աշխարհագրական յօդուածներից, տիեզերաբանական պարապմունքների արդիւնք է և կարևոր նորա գրական գործունէութեան համար 1775 թ. լոյս տեսած շարադրութիւնը—«Ընդհանուր բնական պատմութիւն եւ երկնքի տեսութիւն